

ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՀՈՐԻԶՈՆ

ՅԱԲԵԼՈՒԿՑ «ՀՈՐԻԶՈՆ» ՀԱՔԱԹԱԹԵՐԻԹԻ

Դեկտեմբեր 2016

ՄԵՐ ԽՕՍՔԸ

Բարեւ սիրելի աշակերտներ

Շուտով Կադանդ է. տարուան ամենն գեղեցիկ տօներեն մեկը: Միրուն է տօնածառը: Առատ է հայուն սեղանը: Ուրախ է մթնոլորտը: Թող բարձր ժամանակ մեր բոլորին տրամադրությունները: Թող իրականանան մեր բոլոր երազները: Թող ծաղկի մեր հայրենիքը, ապահով ու ամուր ժամանակ մեր Արցախն ու Ջալալաբադը, ու հոն հաստատուի խաղաղությունն ու արդարությունը:

Բարի արձակուրդ, սիրելի՛ աշակերտեր. ջերմ ու ընտանեկան մթնոլորտի մը մեջ եւ հայկական սովորությունները յարգելով՝ բարով դիմաւորենք Նոր Տարին եւ Սուրբ Ծնունդը:



Հպարտ եմ որ հայ եմ, ինձի նման հայ էր Մխիթար Սեբաստացին

Մեր պատմութեան ընթացքին, հայերս ունեցած ենք նշանաւոր դէմք մը, որ հիմը դրած է հայ մտքի վերածնունդին: Այդ անձը՝ Մխիթար Սեբաստացին է: Ան թափառած է շրջանէ շրջան, գացած է Կարին, Էջմիածին, Սեւան, Պոլիս եւ այլուր խումբ մը աշակերտներ հաւաքած եւ 1701ին հիմնած է իր միաբանութիւնը: Թուրքերու հալածանքներէն փախելով, ան գացած է Վենետիկ, հաստատուած Ս. Ղազար կղզին եւ հոն շինած է եկեղեցի եւ դպրոց:



Աւելի ուշ, Վենետիկի Մխիթարեան դպրոցը դարձաւ հիանալի դպրոց մը, հոն հրատարակուեցան կրօնական, գրական, գիտական եւ այլ բազմալեզու գիրքեր: Այդ դպրոցէն շրջանաւարտ եղան մեծ մտաւորականներ: Այս տարի (2016) 315-ամեակն է Մխիթարեան Միաբանութեան հիմնադրութեան:



Իտալիոյ Սուրբ Ղազար կղզին մեջ այսօր ունինք մօտ 150 000 գիրք, ինչպէս նաեւ հարուստ թանգարան մը, ուր կան 4000-է աւելի հայկական ձեռագիրներ եւ կաթողիկէ վարդապետներու կողմէ հաւաքուած ու նուէր ստացուած արաբական, հնդկական եւ եգիպտական փաստաթուղթեր: Հոն կարելի է տեսնել նաեւ 18-րդ դարու տպագրական մեքենան:

Ես ալ հայ մըն եմ, պէտք է մտածեմ, որ ի՞նչ կրամ ընել իմ ազգիս համար:

Տօնագանգ

Ամեն տարի տօնածառին երբ նայիմ, ես զայն տարբեր կը տեսնեմ. Ինձ կը թուի, թէ լեռ մ'է ան հզօր յոյսի, հաւատքի, թէ բուրգ մըն է՝ կոյտ Կարօտի ու սիրոյ, կամ սանդուխն է դալարաւետ, որ դէպի վեր կը տանի...

Այս տարի ան ինձ համար զանգակ մըն է կանաչած հին արոյրէ՛ Ոսկի արծաթ դրուագներով, ցոյն-ցոյն, ձեւ-ձեւ գոհարներով աշխատուած, Որ ո՞վ գիտէ պապենական ո՞ր լեռներու կողին թառած սուրբ վանքէն, Ո՞ր տաճարէն հոյազանգ դարակուտակ ղօղանջներն իր սեգ կուրծքին տակ Անփոփուած եկեր բազմեր է այստեղ, թուխսի նստած հաւու պէս, Որ կը թողու, որ զարդարեն տօնախմբին գովերգին, մինչդէռ ինք Ականջ դրած կը սպասէ հարուածներուն, որոնք կտուց պիտի զարնեն Անխափան ճակատագրի ժամացոյցին անյեղի



Ծառին վրայ փոքրիկ նախշուն զանգակիկները բոլոր Կը թրթռան, կը դողդղան, կը թրվոն արդէն իսկ ղօղանջով մը հեռաւոր:

Զարեհ Խրախունի



Համագանատական գրական մրցույթ

Գանատայի տարածքին գտնուող հայկական չորս վարժարաններին՝ Թորոնթոյի Գոլդեյն և Լալա Լարեն վարժարաններն ու Մոնթրեալի Ալեք Մանուկեան և Ս. Յակոբ Ազգային վարժարաններին, մօտ 40 աշակերտներ անցեալ տարի իրենց մասնակցութիւնը բերին Համագանատային Հայ Կրթական և Մշակութային Միութեան Գանատայի Երջանային վարչութեան կազմակերպած «Ամանորը մեր տուններէն ներս» համագանատական գրական մրցույթին: «Հորիզոն» Մանկապատանեկանը այս առթիւ կը գնահատէ այն բոլոր աշակերտները, որոնք իրենց մասնակցութիւնը բերին այս մրցույթին, կ'ուզէ մասնաւորաբար շնորհաւորել լաւագոյն գրութիւնները յղած աշակերտները, նաեւ կը շնորհաւորէ մասնակիցներուն ծնողներն ու ուսուցիչները, որոնք ճիգ չեն խնայեր ջամբելու հայ գիրն ու գրականութիւնը, և կը քաջալերեն աշակերտները մասնակցելու նմանօրինակ մրցումներու: Նշենք նաեւ, թէ Համագանատային Հայ Կրթական և Մշակութային Միութեան Գանատայի Երջանային վարչութեան կազմակերպած յաջորդ գրական մրցույթի նիւթն է «Իմ ուսուցիչս», որուն ժամկետն է 31 Յունուար 2017: Կը քաջալերենք, որ «Հորիզոն» Մանկապատանեկանի բոլոր ընթերցող երեխաները իրենց մասնակցութիւնը բերեն այս մրցույթին: Ստորեւ 2015-2016 տարեշրջանի մրցույթին շահողներուն գրութիւններէն քանի մը հատ, ժապարակուած յաջորդ թիւով լոյս պիտի տեսնեն:

Ամանորը մեր տունէն ներս

Ամէն տարի շատ ուրախութեամբ կը սպասենք Նոր Տարուան ամիսը: Այս ամսուն տօնածառ կը զարդարենք և համով ճաշեր կ'ուտենք: Երեխաները նամակներ կը գրեն Կաղանդ Պապային՝ սպասելով Նոր Տարուան գիշերը, որ բանան տօնածառին տակ շարուած նուէրները: Խրախճանքը կը սկսի, և հարազատներու հետ կը հաւաքուինք տօնածառին շուրջ: Համով ճաշեր և անուշեղէններ կ'ուտենք: Իմ ամենասիրած անուշեղէնս մեր անուշապուրն է, որ Կաղանդի օրուան յատուկ քաղրեղէնն է: Անուշեղէն կ'ուտենք, որ նոր Տարին քաղցրութեամբ սկսի: Կը խնդրեմ Աստուծմէ, որ այս օրը ուրախութեամբ անցնենք և կը մաղթեմ, որ Աստուած բոլորին սրտերը լեցնէ միայն և միայն ուրախութեամբ և բոլոր աշխարհին տայ խաղաղութիւն: Նոր Տարի, նոր օր, նոր յոյս, նոր երազ... Իմ երազս է, որ աշխարհի բոլոր տխուր մարդոց երեսները ժպտին, ամէն ցաւերը հեռանան և բոլոր բաժնուած հարազատները իրարու միանան:

Նարին Գոճապապեան
Դ. կարգ-Ալեք Մանուկեան վարժարան

Ամանորը մեր տունէն ներս

Ամանորը Նոր Տարուան տօնն է: Ինձի համար կարեւոր է, որովհետեւ ամէն տարի ես քիչ մը աւելի կը մեծնամ ու կը հասուննամ:

Ամէն տարի ես և ծնողքս կը զարդարենք մեր տունը: Տօնածառին վրայ կը կախենք յատուկ հայկական զարդեր. ինչպէս մեր սիրուն այբուբենը՝ թռչնագիրով, զոր ես պատրաստած եմ, իմ հայերէնի ուսուցչուհիս հետ: Նաեւ կը կախեմ իմ շինած բացիկներս, որոնք լեցուն են Նոր Տարուան բարի մաղթանքներով: Յետոյ, բոլորս միասին կը պատրաստենք համով-համով ուտելիքներ, ինչպէս խորոված միս, լիցք և շատ ուրիշ համով ճաշեր:

Ամանորը ինձի համար շատ հաճելի տօն մըն է: Երբ բոլոր ընտանիքը կը հաւաքուի ու միասին կը տօնենք, չմոռնալով մեր հայրենիքի սահմանի քոյրերն ու եղբայրները: Անոնց համար յատուկ աղօթքներ կը մատուցենք:

Դաիթ Զիլինկարեան
Դ. կարգ-Ալեք Մանուկեան վարժարան

Ամանոր է մեր տունէն ներս

Ամանոր է մեր տունէն ներս,
Ժամանակն է մեծ տօնախմբութեան:
Կը սիրենք նոր էջը՝
Մեր ընտանեկան պատմութեան:

Ուրախութեամբ և մեծ սիրով
Կը դիմագրաւենք Նոր Տարին:
Անցեալի անյաջողութիւնները մոռնալով՝
Կը յուսանք հասնիլ մեր լաւագոյն բախտին:

Ամանորի գիշերը կ'անցնենք միասին,
Կը ստեղծենք յիշատակներ անգին:
Կ'ուտենք, կը խմենք ու կը պարենք եռանդով,
Կը բաժնենք նուէրներ բազմաթիւ համբոյրներով:

Սօլէյ Ապտալեան
Գ. կարգ-Գոլդեյն և Լալա Լարեն վարժարան

Ամանոր բարի, մեր տուն արի

Ամանոր է, Ամանոր,
Ուրախութիւն շուրջ բոլոր,
Մեր տուն արի շուտ արի,
Լաւ օրեր բեր մեզ բարի:

Երջանկութիւն, խինդ ու ծիծաղ,
Անոյշ երգեր, բարի երգեր,
Կապոյտ երկինք, պայծառ արեւ:

Միգի Գիւնաշեան
Գ. կարգ-Գոլդեյն և Լալա Լարեն վարժարան



Նապիկին անկիւնը

Նապիկը շա՛տ-շա՛տ նամակներ եւ գրութիւններ ստացեր է մեր սիրելի աշակերտներէն: Թորոնթոյէն, Վանգուվըրէն եւ Մոնթրէալէն աշակերտներ նամակներ գրած են Կաղանդ Պապային, ոմանք ալ Կաղանդին եւ հայկական տօնածառին մասին հաճելի գրութիւններ գրած են: Ապրի՛ք դուք, սիրելի՛ աշակերտներ, նաեւ շնորհակալութի՛ւն, յարգելի՛ ուսուցիչ-ուսուցչուհիներ: Ստորեւ կը ներկայացնենք գրութիւններուն մէկ մասը, իսկ մնացածը յաջորդ թիւով լոյս պիտի տեսնէ:

Վանգուվըրի ՀՕՄ-ի «Արագ» Շաբաթօրեայ վարժարանի Բ. կարգի աշակերտներուն նամակները Կաղանդ Պապային 7-8 տարեկան մեր երեխաներուն հարցուցիւք, թէ ի՛նչ կը խնդրեն այս տարի Կաղանդ Պապայէն: Ահաւասիկ անոնց պատասխանները: Նշենք, որ անոնց մեծամասնութիւնը Հալէպէն Վանգուվըր հաստատուած երեխաներ են:

Կ'ուզեմ, որ շատ պատերազմ չըլլայ, որովհետեւ շատ պզտիկներ կան, որոնք ամէն օր կը մեռնին:
Այա Չափանեան

Կ'ուզեմ, որ երբ ռուբ նետեն շէքերուն վրայէն անցնի եւ երթայ ու դաշտերուն մէջ պայթի, քան թէ իյնայ տուններուն վրայ:
Խաչիկ Քոչեան

Կը փափաքիմ, որ զարմիկներս, մեծ մայրիկս, քեռիս, քեռիկսս, հօրքուրներս, տէտէս եւ նէնէս առողջ մասն:
Վարդի Սեդրակեան

Թորոնթոյի ՀՕՄ-ի «Գոլովեան» նախակրթարանի Գ. կարգի աշակերտները կը գրեն.

Նոր Տարի
Նոր Տարին կու գայ նորէն,
Եկէք տօնենք ընտանիքին հետ:
Համբերք ժամերն մինչեւ 12:00,
Յետոյ երգենք, պարենք ընտանիքին հետ:
Արինէ Ճամկեօզլու

Նոր Տարի
Նոր Տարին որ գայ,
Երեխաներ խաղալիք կ'ուզեն ունենալ,
Կը յուսամ, որ այս Տարին,
Չմնայ պզտիկ, առանց նուէրի,
Իսկ ես կ'ուզեմ խաղաղութիւն,
Իմ հայ ազգս զօրանայ,
Ու հօր ազգ դառնայ:
Գայիանէ Յարութիւնեան

Մոնթրէալի Ս. Յակոբ Ազգային վարժարանի ընդունման դասարանի (նախակրթարան եւ երկրորդական) աշակերտները կը գրեն Հալէպի իրենց յուշերը Կաղանդի մասին, ապա կը յայտնեն, թէ ինչպէ՛ս կը փափաքին տօնել Կաղանդը Գանատայի մէջ.

Երբ Կաղանդի օրերը կը մօտենային, շուկայ իջնելով նուէրներ կը գնէինք մեր սիրելիներուն: Կաղանդի գիշերը շատ համով ճաշեր, անուշեղէններ եւ պտուղներ կ'ուտէինք: Երբ ժամը 12:00 ըլլար, «Հայր Մեր» կ'աղօթէինք, բարի մաղթանքներ փոխանցելով կը համբուրուէինք եւ նուէրներ կը փոխանակէինք: Գանատայի մէջ ալ կ'ուզեմ իմ հարազատներուս հետ տօնել Կաղանդը:
Ակաբէ Նազարեան

Յունուար մէկը միշտ կը դիմաւորէինք լոյսերը մարելով, ապա վառելով եւ մանաւա նդ աղօթելով, որովհետեւ կ'ուզէինք, որ նոր տարին յաջող եւ լուսաւոր ըլլար: Յետոյ կ'ուտէինք անուշեղէնները: Վերջապէս մեր նուէրները կը գտնէինք դրան առջեւ, կը բանայինք մեծ հաճոյքով:
Արագ Չարեան

Միլվի- Մե՛ծ մայրիկ, ինձի պատմէ, թէ տարիներ առաջ ինչպէ՛ս կը տօնէիք Կաղանդը:
Մեծ մայրիկ- Շատ տարիներ առաջ, Նոր տարուան շրջանին, հայրիկս մեր բակով տունը իսկական եղէնի կը բերէր, որ շատ վաղուց «Կենաց Ծառ»ի իմաստ ունէր, ան կը խորհրդանշէր հայերուն բնութեան պաշտամունքը, բարօրութիւնը եւ առատութիւնը: Ես, քոյրերս եւ եղբայրս կը զարդարէինք զայն գունաւոր թուղթերով եւ պտուղներով:
Միլվի Միքայէլեան

Մոնթրէալի Ս. Յակոբ Ազգային վարժարանի Գ. կարգի աշակերտները կը գրեն.


Չորսուկէս հազար տարի առաջ, Թորգոմ Նահապետի ժամանակ, ձիւնը նստած էր Մասիսին վրայ: Այդ ժամանակ հեթանոս հայերը Նոր Տարին կը տօնէին զարնանամուտին: Հեթանոս հայերը տօնածառը կը զարդարէին չոր պտուղներով, եւ արիեստական տօնածառ չկար: Իսկ հիմա մենք արիեստական ծառ եւ զարդեր ունինք: Կաղանդ Պապա ալ կայ հիմա:
Ալիք Թուրիկեան



Ս. Յակոբ Ազգային վարժարանի «Սարաֆեան» նախակրթարանի Գ. կարգի աշակերտները Կաղանդի առթին նամակներ գրած են հայ զինուորին, ոմանք ալ գծագրութեամբ արտայայտուած են. կեցցէ ք:

Սիրելի՛ հայ զինուոր
 Ես 8 տարեկան աղջիկ եմ: Կ'ապրիմ Մոնթրէալ եւ կը յաճախեմ Ս. Յակոբ դպրոցը: Նոր Տարուան առիթով ձեզի կը մաղթեմ յաջողութիւն, աշխուժութիւն, քաջութիւն եւ խաղաղութիւն: Նաեւ շնորհակալ եմ ձեզմէ, որ Հայաստանը կը պաշտպանէք նոյնիսկ ձիւնին եւ անձրեւին:
Դալար Բարախեան

Սիրելի՛ հայ զինուոր
 Ես կ'ապրիմ Մոնթրէալ եւ կը յաճախեմ Ս. Յակոբ դպրոց: Դուն հոթիրովդ եւ զէնքովդ միշտ պատրաստ ես կռիւի համար: Նոր տարուան առիթով կը մաղթեմ, որ Յիսուս ձեզ պաշտպանէ:
Կապրիէլ Պետրոսեան



Թորոնթոյի ՀՕՍ-ի Ամէնօրեայ վարժարանի «Գոլուեան» նախակրթարան

Մասնակցողներուն անունները

- Սեպաստիան Կարդանեան
- Օլիվիա Օյմարաս
- Մարիլին Էմմանեան
- Լիանա Աւանուս
- Մարինէ Կուլտինկ
- Ճիշդ պատասխանողներուն անունները**
- Անահիտ Կարապետեան
- Լարա Տէր Մինասեան
- Անի Հրեշտակեան
- Քամի Հաճի Արթինեան
- Վան Տէր Յարութիւնեան
- Գայիանէ Յարութիւնեան
- Մարս Մաճարեան
- Մաթեօ Վիյօ
- Նորա Թարգի
- Արի Մուրատեան
- Արինէ Ճամկեօզլու
- Եւա Մարկոսեան
- Ռուբէն Նաւասարդեան
- Արեգ Մուրատեան
- Ալեքսիա Թելեան
- Միլա Մերայտարեան
- Լենա Մահուէեան
- Տանիէլա Բեֆանից
- Լուզրս Թոսուն
- Էմին Պետրոսեան
- Եւա Շահվերդեան
- Էլենա Գրիգորեան
- Յակոբ Հարմանտեան
- Նուշիկ Թոզճեան
- Սոֆիա Սուազեան
- Արքայ Կիրակոսեան
- Յակոբ Կիրիլինեան

«Հորիզոն» Մանկապատանեկանի Նոյեմբերի թիւին Բազմագէտին մասնակցողներուն անունները Մոնթրէալի Ս. Յակոբ վարժարան ընդունման դասարան (նախակրթարան եւ երկրորդական)

- | | |
|----------------------------------|--|
| Մասնակցողներուն անունները | Ճիշդ պատասխանողներուն անունները |
| Ծովակ Արըճեան | Ալիք Չերչեան |
| Արենի Գրիգորեան | Միլվի Միքայէլեան |
| Մէլրի Գրիգորեան | Գրիգոր Պէքարեան |
| Արուին Արըճեան | Աննա Մարիա Շամոյեան |
| Տիանա Արալանեան | Վարդան Կարապետեան |
| Մարիա Ալեմեան | Քրիստափոր Զարեան |
| Նժդէհ Գայապալեան | Մայք Գրիգորեան |
| Մինթիա Խաչոյեան | Դրօ Պալիոզեան |
| Ռաֆֆի Տէրտէրեան | Խորէն Գույումճեան |
| Մանօ Աւագեան | Եսենիա Քելլեան |
| Լիլիթ Թաթոյեան | Լիա Մազլումեան |
| Ալեքսի Իսկէնտէրեան | Արագ Զարեան |
| Ժանէթ Փալանճեան | Վանա Թաթոյեան |
| Մինթիա Թոփալեան | Վարդան Նազարեան |
| Վանա Գրիգորեան | Հրակ Գահուէճեան |
| Անժելիք Օզճեան | Անդրանիկ Քիրթիքեան |
| Թադէոս Մարկոսեան | Յարութ Զուլճեան |
| Յակոբ Տապալաղեան | Էտի Զապունեան |
| Առէն Յակոբեան | Զուլէն Զուլճեան |
| Կալին Նազարեան | Աննա Քրիսթի Գայապալեան |
| Գէորգ Սարգիսեան | Գէորգ Պատազեան |
| Մերլի Օզճեան | Առլի Քելլեան |
| Միլվի Քիրթիքեան | Կարօ Սարգիսեան |
| Սիւվի Օզճեան | Լիլիթ Ադամեան |

«Բաստրմաճեան» երկրորդական Մասնակցողներուն անունները

- Նանոր Փիլիպպոսեան
- Քրիստինա Ապիքեան
- Նարեկ Ժաքմաքէլեան
- Պարգէլ Սկրեան
- Մէրի Գայապալեան

Ճիշդ պատասխանողներուն անունները

- Անիթա Շուրալեան
- Լոռի Բանոյեան
- Ռիմա Խարշաֆճեան
- Վանէ Տիմիթեան
- Ռուպինա Գալուստեան
- Դրօ Մելքոնեան
- Կրէկ Խաչատուրեան
- Արի Թորոսեան
- Շիրազ Ղազարեան
- Աւետ Գազարեան
- Շուշի Տեմիրճեան
- Քրիստափոր Ասքանօղլի
- Ալեքս Քիւփէլեան
- Ժագ Գարայեան
- Գէորգ Տարազճեան
- Աւետիս Սոմունճեան
- Մերլի Ահարոնեան
- Մելինա Թիֆէնքճեան
- Արգիւնա Սկրրեան
- Քրիստ Եսայեան

Բախտաւոր մասնակիցներ Նոյեմբերի թիւին՝ Մարք Արէլեան Դեկտեմբերի թիւին՝ Ռուպինա Գալուստեան



Մանկապատանեկան Հորիզոնը կը հովանաւորեն ՀՕՍ-ի Գանատայի Երջանային Վարչութիւնը եւ Գանատայի շրջանի իր 10 մասնաճիւղերը

Խմբագրութիւն՝ Սոնա Թիթիզեանի Թիւր պատրաստեց Անահիտ Պալեան Զեւայղացք Նորայր Նիկողոսեանի

Հեռաձայն (514) 332-3757
 Հեռապատճեն (514) 332-4870
 Email: sylvia@horizonweekly.ca